



«ՇԻՐԱԿԱՑՈՒԾԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Քննական հարցարան

10-րդ դասարան (հայոց լեզու)

Ազգանուն, անուն-----

Դասարան-----դպրոց-----

Լրացրո՛ւ բաց թողնված տառերը և կետադրի՛ր (13-0,5, -0,25):

Վաղ գարնան թ-պամած մի օր էր: Փարիզի կենտրոնական ոստիկանության պետը ե-ետունին մոտ մի երիտասար- մտահո- անցուդար- էր անում սենյակում: Նա ար-են որերոր- անգամ էր կար-ում անստորագիր մի նամակ որտեղ գրված էր Յսկեք քանդակագործ Անտուան Բուրդելին: Նրա այգում դիակ կա թաղված:

Ճիշտ է ինքն անձամ- ճանաչում էր անվանի քանդակագործին գթասիրտ ու բարեհամբ—ր այդ մար-ուն և բազմաթիվ ան-ամներ եղել էր նրա այգում հիացել նրա տաղանդով սակայն հիմա ի պաշտոնե ստիպված էր կասկածել ու ստուգել նամակում գրվածը:

Հաջոր- օրը վաղ առավոտյան ոստիկանապետի կար-ադրությամբ տասը ոստիկան զինված բահերով ու քլունգներով թակեցին Բուրդելի տան դուռը: Հայտնելով իրենց վաղաժամ այցի պատճառը և ստանալով տանտիրո- թույլտվությունը ոստիկաններն անմի-ապես գործի անցան: Մար-իկ ո-ջ օրը փորեցին տակնուվրա արեցին պարտեզը սակայն ոչինչ չհայտնաբերելով ձեռնունայն ու հուսախա- հեռացան:

Դեպքից անցավ մոտ մեկ ամիս և քանդակագործի պարտեզը լցվեց տարատեսակ ու տարագույն ծաղիկներով: Եվ երբև- ոչ մեկի մտքով չանցավ որ նամակի հեղինակն ինքը Անտուան Բուրդելն է: Քանդակագործը հաճախ էր ափսոսանքով նայում իր խոպան դար- ած անմշակ պարտեզին բայց մոլախոտերը քաղհանելու հողը փխրեցնելու ժամանակ չէր ունենում:

2.Գտի՛ր հետևյալ նախադասության ձևաբանական վերլուծության սխալները, ուղղի՛ր (3-0,5):

Քանդակագործը հաճախ էր ափսոսանքով նայում իր խոպան դար-ած անմշակ պարտեզին բայց իր պարտեզում աշխատելու ժամանակ չէր ունենում:

- **Քանդակագործը**-գոյական, անձնանիշ, որոշյալ առում, հայցական հոլով, ի արտ հոլովում_____



«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Չ Վ Ի Ե Վ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն

● **խոպան**-ածական, հարաբերական-----

● **եր նայում**-բայ, դիմավոր, պարզ, սահմանական եղանակ, անկատար անցյալ, ներգործական սեռ-----

● **իր**-դերանուն, անձնական, ուղղական հոլով-----

● **հաճախ**- ձևի մակբայ -----

● **աշխատելու**-բայ, անդեմ, ապակատար դերբայ, չեզոք սեռ_____

3.Կազմի՛ր հետևյալ գոյականների հոգնակիները(2-0,5)

սպա - _____

ոտնաձայն - _____

աստղ - _____



«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Չ Վ Ի Ե Վ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն

մատենագիր- _____

4. Տեքստից դո՛ւրս գրիր հնչյունափոխված 4 բառ, նշի՛ր հնչյունափոխության տեսակը(2-0,5-0,25):

5.Տեքստից դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հոմանիշները(3-0,5):

- Սրտացավ-
- Քանքար-
- Երկբայել-
- Դատարկաձեռն-
- Վհատ-
- Երփներանգ-

6. Տեքստից ընտրի՛ր և համապատասխան տեղում գրի՛ր անհրաժեշտ մեկական բառ(1-0,2):

Պարզ բառ - _____

Վերջածանցավոր բառ - _____

Հոդակապավոր բարդ բառ- _____

Անհոդակապ բարդ բառ - _____

Բարդածանցավոր բառ - _____

7.Գրի՛ր հետևյալ բառերի հականիշները(2-0,5):

խրթին - _____

նախատել - _____



«ՇԻՐԱԿԱՑՈՒԹԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
